№ 19. Մայիսի 18. — 1872 — Մայիսի 18. № 19

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 7 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Մշակ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Որբուհու տուն) և Իվանովի ընթերցարանումը։

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Պատնաւոր յայտարարութիւն ապէշ տառերը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւնները տպվումեն հայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիերէն, գերմաներէն և թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պաշտօնական։—Մեր տնտեսական ապագայ։—Ներքին տեսութիւն։ Ս. Պետերբուրգիր։ Նամակ Բագուից։ Պ. Սատակովսկու բրօշիւր։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Կին և քաղաքականութիւն։ Նամակ Թէհրանից։ Նամակ Բէրլինից։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։—Ֆէյլիէտօն։

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ հաստատելով ներկայ տարվայ ապրիլի 12-ին ժամանակաւոր կանոնները Կովկասեան գլխաւոր կառավարութեան Կովկասի և Անդրկովկասի բնիկների վարձատրութեան վերաբերութեամբ, որոնք ոչ զինուորական ոչ քաղաքական աստիճաններ ունեն, համեմատ Կովկասեան մասնաժողովի կանոնադրութեանը բարեհաճեց հրամայել.

1, Որ Կովկասեան և Անդրկովկասեան այն բնիկները, որոնք ոչ զինուորական կանոնաւոր մասերի մէջ, ոչ քաղաքական վարչութեան մէջ են ծառայում, չենթարկվեն ոչ մի դրամական պարտաւորութեան իրանց չնորհած վարձատրութիւնների համար, ներկայ կանոնների համեմատ:

2, Բացի սորանից, Կովկասի և Անդրկովկասի մէջ եղած կարգադրութիւնները զինուորական և քաղաքական աստիճաններ չունեցող բնիկների վերաբերութեամբ, այսուհետև վերցրած համարվի:

ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱԴԱՑ՝

Քանի գնում են, Կովկասը և Անդր-Կովկասեան երկիրը, կորցնում են իրանց նախնական անտառները: Բնական անտառները անողորմ և առանց անտեսական հաշուի ոչնչացնում են, իսկ արուեստական անտառները չեն տնկում: Ի հարկէ անտառների պակասութեան հետևանքը փայտի թանգութիւն է մի կողմից, և ուրիշ կողմից երկրի կլիմայի փոխվելը դէպի վատը:

Փայտի թանգութիւնը, ինչպէս անհրաժեշտ մթերքի, ազդեցութիւն ունի և ուրիշ առաջին հարկաւորութեան նիւթերի թանգանալու վերա:

Մի և նոյն ժամանակ գիտական հետազօտութիւններից հաստատվում է, որ այն երկրում, ուր փոքր առ փոքր անտառները ոչնչանում են, կլիման դառնում է չոր և փոփոխական: Անտառները մի կողմից միշտ պահպանում են կլիմայի բարեխառնութիւնը և օդի հաւասարութիւնը, արգելք են լինում սաստիկ քամիների,—միւս կողմից պահպանելով խոնաւութիւնը, թոյլ են տալիս գօլորշիների աւելի կանոնաւոր կազմվելուն և այդպէս առաջացնում են յաճախ և կանոնաւոր անձրևներ:

Նկատված է, որ անտառ ունեցող երկրում անձրևները յաճախ են գալիս և փոքր քանակութեամբ, այն ինչ անտառ չունեցող երկիրը ենթարկված է սաստիկ անձրևներին որոնք հեղեղի պէս են գալիս, բայց ուշ ուշ և ժամանակամիջոցները մեծ են լինում...:

Այդպիսի փոփոխական կլիման վնասակար է ոչ թէ միայն առողջութեան համար, բայց և չէ նպաստում երկրի կանոնաւոր բերրութեանը:

Գերմանիայում և Շվէյցարիայում հաստատված մի երկրի մէջ անտառների բացակայութեան վնասները և ոչ թէ միայն հոգս են տանում պահպանել եղած անտառները, բայց և նորերը արվեստական կերպով առաջացնել:

Անտառների բացակայութիւնը մի երկրում պատճառում է կանոնաւոր և յաճախ անձրևների բացակայութիւնը: Հետևանքը լինում է չորութիւն, սաստիկ քամիների յաճախութիւն, կլիման անչափ փոփոխական է դառնում,—երկիրը միշտ վտանգի մէջ է լինում անբերրութեանը ենթարկվել և այդ բոլոր ցաւերի վերջը լինում է առաջին հարկաւորութեան նիւթերի թանգութիւն:

Երբ մի տեղ թանգանում է առաջին հարկաւորութեան նիւթը, օրինակ հացը և միրը, կարելի է միայն մի միջոցով փրկել այն տեղը թանգութենից և գուցէ սովից ու սարսափելի հիւանդութիւններից, այն է երկաթուղու միջոցով բերելով հարկաւոր մթերքը այն երկիրը ուր որ նա պահանջվում է:

Եւրոպայում, այժմեան ժամանակին, անհերևակայելի է մի որ և է երկրի մէջ սովի յայտնվելը ինչպէս որ այդ պատահում է Պարսկաստանի պէս լուսաւորութեան և կրթութեան ստոր աստիճանին կանգնած երկիրներում, այնպիսի երկիրներում ուր հասարակութիւնը կարծես գրած ունի իր քաղաքական դրօշակի վերա այդ պատմական անէծքը „տելութիւն դէպի ամեն նոր բութիւն“.

Երբ Եւրոպայի մի մասում յայտնվում է մի որ և է մթերքի թանգութիւնը,—իսկոյն ուրիշ տեղերից երկաթուղու միջոցով բերվում է այն պահանջած մթերքը: Ցարաբերութեան այդպիսի կատարելագործված միջոցներով նոյն բօպէին վերականգնվում է մթերքի արժողութեան հաւասարակշռութիւնը:

Ի հարկէ Կովկասն էլ ժամանակով կը ծածկվի երկաթի ճանապարհների գիծերով... բայց ո՞ւր է մեր շոգեկառքերին հարկաւոր վառելիքը...: Անտառները այդպէս էլ օրից օր անչեռանում են Կովկասեան երկրի բոլոր տարածութեան վերա...: Փայտ չ'կայ, նոր անտառները չեն տնկվում, ուրիշ երկիր են: Մեր ոչինչ չը չինող, (չինողների համար չեմ ասում) երիտասարդները էլի էն գերա-ՌՆչականներն են,—որովհետև միշտ հին սերունդին, միշտ հոգևորականներին իրաւացի կերպիւ վատաբանելով, չը կամեցան մի անգամ էլ ձեռները սրտերի վերայ դնեն, որ իմանան թէ իրանք ինչ են: Իսկ ինչ որ վերաբերում է մեր բարձր, մեզ համար կորած չը-ջանը, որք են, տ. Շռայլները, օրիորդ Թուխակները, ապառաժ-Աղաները, օ օ...նրանք էլի միևնոյն առաքինիք են, ամէն ճշմարիտ խօսքը հայհոյանք համարողներն, ու ամէն հասարա՛կական պակասութիւնների նկարագրութեան մէջ, իրանց անձնական Ես-ը դուրս ցցող հերոսները:

Մի խօսքով Զատկի օրին մեր բոլոր անմաքրութիւնից մաքրուելով, արդէն հաղար ութ հարիւր եօթանասուն մէկ տարի, երեք ամիս և տասնը վեց օր կրկնուող չնորհաւորութիւնը—քրիստոս յարեաւ Ի մեռելոց—իբրև ջերմեռանդ քրիստոնեա էլի կրկնեցինք, չը խոստովանելով զորա հետ և այն ճշմարտութիւնը, որ յօրէ անտի երբ պ. Հայկը կամեցաւ մեղայիսի արժանի որդիք ունենալ, մենք մինչի այս օր քնած ենք, և առաջ գնալու ջանք չենք անում,

♂

Ահա էսպիսի միտիթարական և մեր յառաջադիմութեան ունքերը դրստող (մոռացայ ասեմ բայց աչքը քոռացնող) երևոյթներով և անց քերով լցված՝—ես թափառական-հայս, բաց անելով իմ բարցած՝—ես թափառական-հայս, բաց անելով իմ ֆէյլիէտոնական մատեանս, որի վերայ գրած է չորս միլիոն խելացի անձանց կնիքը,—կարդում եմ.

* * *

Էլէլէ ու չէ էլել, կամ էսպէս ասենք,—եղել է ու հիմի էլ կայ աշխարհիս երեսին մի քաղաք, որի անունը է Թիֆլիզ· էդ Թիֆլիզ քաղաքում մի չատ խելացի առած է մնացած աւանդութեամբ.

Էշը գատէ, ձին ուտէ.
հա գան-գա-լայ-գան-գա-լայ...

Բացի էդ առածից՝ մի չատ խելացի սովորութիւն էլ կայ էդ քաղաքում, որ երբ հայերէն ներկայացում լինի, հասարակութիւնը էնքան տոմսակ է ցանկանում առնել, որ դերասանները թատրոնի կառավարութեան խօստացած վարձը անպատճառ վճարեն. իսկ իրանց մէջը գոնեա մին քանի մանէթ փող փայ անելու անպատճառ չունենան, և չատ անգամ (էդպիսի գեղեցիկ տպաւորութիւններից յետոյ) քաղցած փորով անպատճառ տուն գնան, և (եթէ քնները կը ատնի) քնեն: Հիմի ինչ ես հրամայում, որ ես մնեմ ընթերցող: Ինչ խօսկերով կը կամենաս որ ես փառաւորեմ էդ չափազանց ընտիր քաղաքի, չափազանց աղնիւ հասարակութեանը, որ նրա Ես-երին չը վիրաւորեմ: Ինչպէս գովեմ էդ գերա-անմխիթար դերասանների գերա-իմաստուն վարմունքը, որ ամէն ներկայացումից յետոյ, ձեռները դարտակ տուն է դառնում: Եթէ ասեմ ձմ համար էնքա ամբողջ ամիսներով պատրաստվում, որ ձեր հաւարած մին քանի շահին էլ ուրիշը տանի: Եթէ էդպէս ասեմ, պէտք է ստիպված լինեմ էն ժամանակը վերադրեալ խելացի առածն էլ, իբրև անխոտելի բան էդ խելօք դերասաններին վերաբերեմ, թէ,—էշը գ՚ատեց, ձին կ՚ուտ, հա գան-գա-լայ-գան-գա-լայ—բայց որովհետև էդ վերաբերելով պէտք է զրանց գերապատուելի ես-ին դիպչեմ, ուրեմն ոչ ասում եմ, և ոչ էլ վերաբերում եմ.....

♂

Եթէ էդ չեմ ասում, պէտք է մի ուրիշ բան ասեմ:

րից վառելիք բերելը երբէք չէ կարող պահպանել մի երկրի երկաթի ճանապարհների անկախ գոյութիւնը, մանաւանդ հեռու երկիրները, ինչպէս Կովկասը...այդպիսի երևոյթը կ'լինի արվեստական...:

Մեր բոլոր յոյսը պիտի դնենք տեղական քարածուխի վերա, որի հարուստ խաւերը արդէն մի տեղ յայտնվեցան,—այն է Քութայիսից ոչ հեռու Տղբուլի անունով տեղումը, ուր գտնվում է, ինչպէս երևում է, քարածուխի շատ հարուստ հանքը:

Երկրի այդ հարուստ բնական արդիւնքը սպասում է բովադործութեան...:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

С. П. Вѣд. լրագրի (№ 120) մէջ կարդում ենք մի նամակագրութիւն Թիֆլիսից այն խնդրի առիթով, որ վերին աստիճանի հետաքրքրում է մեր հասարակութեանը: Նամակագրութիւնը նուիրած է տեղական լեզուների խնդրին ուսումնարաններում: Հեղինակը հետազօտում է տեղական հանգամանքները և նկարագրում ընթերցողին յետադայ պատկերը:

„Ներկայացրէք ձեզ խիտ աղգաբնակութիւն քաղաքային և գիւղական, որը կամ հայերէն, կամ վրացերէն կամ թուրքերէն է խօսում, և զուգընթաց սորա հետ ներկայացրէք ձեզ բոլոր հասարակական և կառավարչական հիմնարկութիւնները սկսելով դասատանից և նօտարիուսի գրասենեակից և վերջացնելով փոստայով և հեռագրական վարչութեամբ, որտեղ չկայ ուրիշ լեզու բացի ռուսերենից"։

Յետոյ հեղինակը անցնում է այն խնդրին թէ ինչպէս հեշտացնել բազմութեան համար սորանից ծագած անյարմարութիւնները: Բարձր դասը մեզանում ծանօթ է ռուսերէնի հետ, բայց աշխատողների բազմութիւնը քաղաքում և մանաւանդ գիւղում չ'գիտէ ռուսերէն, և երբ նոքա դիմումեն դասատանը կամ նօտարիուսին, կամ գնումեն մի պաշտօնական տեղ, կամ ստիպված են լինում գրել մի հեռագիր կամ հասարակ հասցէ նամակի վերա,—նոքա ստիպված են լինում դիմել թարգմանիչներին, կամ ինչպէս անուանում են, ռուսաց լեզուի գիտցողներին: Բայց ինչ միջոց է առաջարկում նամակագիրը այդ անյարմարութեան դէմ, որ եթէ ոչ բոլորովին, գոնէ մասամբ հեշտացնէ յարաբերութիւնները: Աբքունի և հասարակական հիմնարկութիւններում ծառայողների մեծ մասը ուսումն առել դոնէ գիմնազիոններում և գլխաւորապէս Կովկասեան գիմնազիոններում: Եթէ այդ գիմնազիոններում աւանդվէին տեղական լեզուները այն էլ հիմնաւորապէս, սորանով, նամակագրի կարծիքով, ժողովրդի յարաբերութիւնների համար մեծ յարմարութիւն կ'ծագէր:

Մի և նոյն ժամանակը հեղինակը հաղորդում է, որ անցեալ տարվայ դիրեկտօրների ժողովի մէջ ճանաչվեցաւ տեղական լեզուների դասաւորութեան աւելորդ լինելը:

Նամակագիրը աւելացնում է, որ այդ վճիռը առ այժմ պ. պ. դիրեկտօրների մասնաւոր կարծիքն է դեռ ևս, և նախ պիտի ենթարկվի բարձր վարչութեան վճռին:—

Այժմ, խօսելով С.П. Вѣд. լրագրի մէջ տպված յօդվածի առիթով, մենք հարկաւոր ենք համարում ասել թէ այդ խնդրի վերաբերութեամբ վճիռը յայտնի է արդէն: Մենք նորերումս լսեցինք, որ պ. պ. դիրեկտօրների առաջարկված նախագիծը չընդունվեցաւ: Տեղական լեզուների աւանդելը կ'պահպանվի: Միայն այդ լեզուների աւանդելը կ'լինի ոչ թէ գիմնազիօնի բարձր դասատներում, այլ միայն չորս փոքրերում: Բացի սորանից լսեցինք, որ այդ առարկաներին երկու առաջին դասատներում շաբաթվայ մէջ նուիրվում է երկու երկու դաս, իսկ երրորդ և չորրորդ դասատան մէջ մի մի դաս միայն:

Խմբագրութեան մէջ ստացվեցաւ պ. Ստատկովսկու մի բրօշիւր „О желѣзной дорогѣ чрезъ Кавказск. горы для соединенія Тифлиса съ Владикавказомъ" (Թիֆլիս և Վլադիկավկաս քաղաքները երկաթուղիով կապելու մասին Կովկասեան սարերի միջով): Այդ գրվածի մէջ պատուելի հեղինակը ապացուցանում է, որ այդ տեսակ երկաթուղի չինելը այնքան դժվար չէ, որքան թվում է: Հիմնվելով այն մտքի վրա, որ Թիֆլիսը և Վլադիկավկասը անպատճառ պիտի միանան երկաթուղու գիծով, հեղինակը ասում է, որ անհրաժեշտ է սարերի միջով անցնել այդ գիծը: Բայց ինչպէս: Եթէ միացնենք Վլադիկավկասը, Պետրովսկ, Բաքու և ապա Թիֆլիս, կը հեռանանք ուղիղ գծից: Կամ միացնենք անմիջապէս Թիֆլիսը Վլադիկավկասի հետ: Թէ առաջին, թէ երկրորդ դէպքումը ստիպված կը լինինք տանել երկաթուղին սարերի միջով: Ցայտնի է, որ սարերի շղթայի միջով երկաթի ճանապարհ չինելը թանդ է նստում, հասկանալի է նմանապէս, որ այդ աւելի էլ դժուար է,—և այդ խոստովանում է ինքն հեղինակը: Բայց մինթէ արդելքները այնքան մեծ են, որ ստիպէր մեզ հեռանալ ուղիղ գծից և մի այնպիսի ահավոր չրջան անել ինչպէս Վլադիկավկասից Պետրովսկ և Բաքու: Սարերի շղթայի միջով երկաթուղի տանելու համար կայ մի գլխաւոր արդելք, այն է քանի մի բարձրութիւնների մէջ անցքերը փորելու (տոննել): Մեզանում հարկաւոր կը լիներ մի գլխաւոր տոննել փորել Կօրիի և Գուդաուրի մէջ 6 վերստ երկարութեամբ և էլի մի քանի փոքր անցքերը ժայռերի մէջ, որոնց գումարված երկարութիւնը հաւասար կը լինի 7 վերստի: Ուրեմն հեղինակի հաշվով ընդամէնը 13 վերստ հարկաւոր է սարի մէջ փորելու: Սա մի աշխատանք է, որ չէ ներկայացնում այն դժվարութիւնները, որ ունին Եւրոպացիք օրինակ իրանց Ալպեան սարերը փորելով: Կան տոննէլներ Եւրոպայում, որոնք 33 վերստ երկարութիւն ունին: Իսկ Կովկասեան սարերը կազմող քարերի տեսակները աւելի կակուղ են, քան թէ Ալպեան սարերում, նմանապէս ձիւնի գիծը աւելի բարձր է մեզանում քան թէ Եւրոպայում (չը հալվող ձիւները աւելի մեծ բարձրութիւնների վրա են գտնվում, քան Եւրոպայի սարերում): Այդ դժվարութիւնների պատճառով երկաթի ճանապարհի ծախսը կաճի մինչև $10^1/_2$ միլլիոն:

Բայց այն յարմարութիւնը կայ, որ եթէ պատահի Անդրկովկասում մի պատերազմ, այդ երկաթուղին մեծ հեշտութեամբ և արագութեամբ կը բերի զօրքին հարկաւոր պաշար և հաց:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Որովհետև ընթերցողը սիրում է տեղեկանալ զանազան տեղերում եղած լուրերին, ուստի կամենում եմ հաղորդել նրան հետևեալները:

Տեղս մեծ պասի վերջին շաբաթներում կազմուեցաւ Մարդասիր. Ընկերութեան խորհրդովը մի նոր ընկերութիւն „Բարեգործական" անունով, որի նպատակն է օժանդակել Բագուի մէջ գտնուող թէ օտար, թէ ընիկ հայ աղքատներին: Արդէն ընտրուած են այդ ընկերութեան գործերի հոգատարութեան մասին հինգ հոգաբարձուներ, որոնց աշխատութեամբ այս կարճ ժամանակում ժողովեցաւ բաւական գումար: Տեղական բնակիչները, որ մեծ մասով օտարաքաղաքացիք են, սիրով և առատօրէն ստորագրվում են այդ աղքատասիրական բաժանորդութեանը: Ընկերութեան վերաբերմամբ պէտք է զրուի կանոնագրութիւն և հաստատուի ուր հարկն է:

Հոգաբարձուաց գործունէութիւնը եղել է հետևեալը.—դոքա ժողոված գումարից դեռ մի չաբաթ Զատկից առաջ ցուցակագրելով Բագուայ մէջ գտնուած թէ օտար, թէ ընիկ հայ աղքատներին, երկու անգամ յիշեալ չաբաթվայ ընթացքում ողորմութիւն բաժանեցին, ոմանց ալիւր, ոմանց փող ծրարի մէջ դրած: Բաժանված տուրքովը կարող էին այդ աղքատները կառավարվիլ մի քանի չաբաթ:

Երեսունից աւելի Պարսկաստանից հայ աղքատներ էին եկել, անբնդերելի սովից և ծանր հարկապահանջութիւններից ստիպուած: Հոգաբարձուները վեր առին իրանց վրա դոցա հոգացողութիւնը. տուին դրանց ամէն մէկին օրական հացի փող չարունակ մի չաբաթ, մինչև որ կազդուրվեցան դոցա մշակութեան համար անընդունակ դարձած մարմինները: Ցետոյ քաղաքի մէջ մշակութեան գործեր դտին այդ խեղճերի համար գործելու: Իսկ դոցա մէջ գտնուած հիւանդների վրա առանձին ուշադրութիւն դարձրին, գտնուեցաւ այնպիսին, որ թագաւորական հիւանդանոց տարան ընկերութեան հաշվով այն տեղ առողջացնելու: Եւ շատ աղքատ ճանապարհորդներին ճանապարհի ծախսը հատուցանելով ճանապարհին, ուր նոքա ցանկանում էին գնալ:

Դորանից յետոյ չեն տեսնվում դռնէ ի դուռն մանեկող հայ աղքատներ այս տեղ, բացի տաճիկ աղքատներից, որոնց շատերի համար բնութիւն է անկարօտ վիճակում ևս մահ գալը. մանաւանդ ամառվայ ժամանակում, ըստ մեծի մասին հայերի դիւղօրայքը և նոցա կալերը. ինչպէս շատ անգամ ականատես եմ եղած, որ շատերը չեն ընդունում ցորենի սակաւ տուրքը, որի մասին աղքատ գիւղականը թէ որքան քրտինք է թափել տարվայ թէ ցուրտ և թէ տաք եղանակներում: Չէ հեռանում կալիցը կամ պարզ գիւղացու խրճիթի դռանից, մինչև որ մեծ ամանով չէ առնում ողորմութիւնը:

Երանի թէ, մեր գիւղական հայերը կարողանային իրանց մէջ խորհուրդ և ընկերութիւն կազմել. որ տարվայ այդ ժամանակում իրանց արտերից ձեռք բերած ցորենից ըստ կարողութեան և յօժարութեան տուրք ժողովէին ամբարէին իրանց և կամ հարևան գիւղերի յայտնի հայ աղքատներին հարկաւոր գիպուածներում օգնելու նպատակաւ, քան չատ տաճիկ կեղծեալ աղքատների անէծք կամ կեղծ ու պատիր գովասանքը լսէին նրանց ողորմելու ժամանակը:

Պատահումէ, որ գիւղական հայ աղքատի արտերի բերքը այնքան չէ գոյանում, որ կարողանայ կառավարել իւր ողորմելի գերդաստանը և սերմն ունենալ աշնան սերմելու. իրա գիւղից օգնութիւն չը գտելով, գնումէ ստիպուած մի տաճիկ գիւղականի մօտ, պարտք է առնում սերմացու ցորեան մէկին մէկ կամ աւելի չահով ճարահատեալ, որ գալ տարին հատուցանէ: Եկ, տես այդ խեղճի վիճակը այն ժամանակ, եթէ և իւր մշակած երկիրը զլացել է նորան տալու իւր յուսացած հունձը: Ինչ է անում պարտատէրը, կամ խեղճի օգնական անասունն է խլում ձեռքից, թողնելով նրան դատարկ վիճակի մէջ, կամ կրկնապատկումէ չահը. թաղելով նորա գլուխը ծանր պարտքի տակ, այնպէս, որ մինչև անգամ խղճալու դերեղման մոնելուց յետոյ դարձեալ աղատ չէ մնում նորա որքացած ընտանիքը պարտքատէրի ձեռքից:

Մթթէ դժուար կը լինէր գիւղական քահանաների և տանուտէրերի համար, եթէ նոքա համոզվելումէր և կացնի հարուածներով էր վերջացնում իւր հակառակորդ ազնուականների գլուխը:

Տիկին Սաթինիկը նոյնպէս լաւ խաղաց Իւլիայի դերը: Նա աւելի լաւ էր հասկացել Իւլիայի բընաւորութիւնը, քան թէ պատուական Թիֆլիզի պատուական հասարակութիւնը—իր պարտականութիւնը թատրոնի վերաբերութեամբ:

Իսկ ինչ որ կը վերաբերի երկու ներկայացման միւս խաղացողների համար, նրանք աննչան էին իրանց խաղով: Նշանաւոր էր միմիայն պ. Ամերիկանը, նշանաւոր էր նրանով որ Կոմդը-Բարադասի դերը ներկայացնելով, ոտքից մինչև 'ի գլուխ, արմատից դէպի վեր, ամենեին Բարադաս չէր:

♂

Մին քանի օրից յետոյ մեր դերա-իմաստուն դերասանները չը խրատուելով անցեալի փորձից, ներկայացրին Թուղթ-խաղացողի կեանքը: Էդ ներկայացումով պ. դերասանները յոյս ունէին որ մեր բոլոր կանանչ դաշտի հերոսները ճանճի պէս կը թափեն թատրոն, բայց էդ յոյսերն էլ 'ի զուր անց կացաւ: Նրանք երևի էնքան ամօթխած են, որ վախեցան թէ երեսները կարմրի երբ թատրոնում իրանց կեանքը տեսնեն:

Թուղթ-խաղացողի կեանքի ներկայացումը մի կերպով իրանց դերասաններին էլ է վերաբերում: Իրանք էլ թուղթ խաղացողի պէս մի պարտքից աղատուելու համար, նորից խաղում են, ու էլի պարտքի մէջն են խրվում:

Կամ եթէ ուզումեն պարտքից աղատուել, դոնեա ֆօմինոյի առիթով կարող էին տոմսակները էժանացնել, օրինակ առնելով պ. Նաղլերից որ ֆօմինոյի պատճառաւ շատ էժան դնով չնորհեց իրանց թատրոնի բէմը,—երեք ժամ բեմի վերայ դուրս դալու համար 220 մանէթ առնելով:

♂

Վերջացնումեմ ֆէլիէտոնս երկու մ օ դ ն ի պ ա տ մ ա բ ա ն ն ե ր ի առիթով:

Վերցրու Մեղուի 4-որդ համարը ընթերցող, կարդա առաջնորդող յօդուածի սկզբից, մինչի մի 23 տող: Էդ տեղ երևելի պատմաբանը ասումէ, թէ պատմական փաստ է, որ այն երկիրները որոնք բնութեան յաջող պայմանների տակը չեն, որտեղ ոչ բնական հարստութիւն կայ, և ոչ էլ պտղաբերութիւն, դոքա ամէնից հարուստ և ամէնից լուսաւորեալ ազգերն են. և այլն:

Ես էդ կարծիքի ընդեմ բան՝ չեմ ասում·բայց տես թէ ով է ասում:

Միևնոյն Մեղուի, միևնոյն 4-որդ համարի մէջ, միևնոյն խմբագրութեան անձինքներից մէկը, միևնոյն մտքի վերայ խօսելով՝ այսպէս է ասում—„պատմական իրողութիւն է, որ աւելի մտաւորական կեանքով ապրում են այն ազգերը, որոնք գտանվելով բնութեան աւելի յաջող և ձեռնտու պայմանների տակ, չուտով են կարողացել հայթայթել և ապահովել իւրեանց մնունդը և ֆիզիքական կարիքը"—

Երկուսն էլ պատմաբան դառնալու փափագ ունեն, երկուսն էլ հրաւիրումեն միամիտ ընթերցողին որ իրան հաւատան, երկուսն էլ խմբագրողներ են, բայց երկուսն էլ մէկ մէկու հակառակ բան են ասում:

Հիմի մենք ինչ ասենք ընթերցող, դրանցից որին հաւատանք: Եթէ իմ խորհուրդս կը լսես, ոչ մէկին դեռ չը հաւատանք, քանի որ մեզ էդ գաղտնիքը չեն մեկնել: Առժամ բաւականանանք հետևեալ առածով:

դրողը դուք—ջնջողը դուք
ովկասի—թէ սուտը դուք.

Զաքուճը:

Մենք յառաջ ենք գնում պարոններ, մթթէ չէք հաւատում:

Ձեզ յայտնի է, որ ֆօմինոյի օրերում ամէն բան էժան է ծախվում.—խոզն էլ, երդումն էլ, խիղճն էլ,— — — — — — պատիւն էլ, ու ամէն կանանց հագնովի ապրանքն էլ: Էս տարուայ ֆօմինոյին, մեր գեղեցիկ սեռի երկու Տիկիններ, մի բոլորովին մ օ դ ն ի-ա ռ և ա ո ւ ր ա ն ե լ ու հնարք են գտել: Էդ հնարքի մէջը կայ այն կախարդական զօրութիւնը, որ չէ թէ էժան, այլ բոլորովին անփող ապրանք կարելի է առնել: Աղնիւ տիկինները փորձով հաստատեցին էդ բանը, ներս մտնելով մի մագազին, որտեղ մարեխի տարափի պէս կանանց բազմութիւն կար: Մի քանի բոպէի մէջ համեատաբար, (մոռացայ ասեմ ծածուկ) սլքայրին երկու թափ թանդագնանի ապրանք, և աղաչնու միամրտութեամբ դուրս եկան մագազինից:

Դուքնի տէրը կարծիք չը կայ, այդպիսի մ օ դ ն ի առուտուր անողներից փող չը կարողացաւ պահանջել. . . . . .

Այո պարոններ, մենք յառաջ ենք գնում, հաւատացէք որ յառաջ ենք գնում:

♂

Որովհետև յառաջ ենք գնում, ես էլ կամեցայ որ յառաջադէմներից մէկը լինեմ:—Ինչով, հարցրի ճակատագրին:—Պէտք է թատրոն մանդաս:—Բայց փող չունեմ պարոն ճակատագիր:—Մտիդ պոկիր, պատասխանեց չարացած:

Պոկեցի և գնացի:

Ներս մտնելով թատրոն, կօրիդօրի պատերի վերայ քաշած աֆիշայից իմացայ որ էդ դիշեր (ապրիլի 26-ին) պ. Նաղլերի-ընկերութիւնը պիտի ներկայացնէ „Կարդինալ Բիշելիօ" դրաման, հինդ արարող. հեղ. Բուլվերի: Դարա կշտին կպած էր, և մի ուրիշ աֆիշկայ, որին կարդալով իմացայ որ երկու օրից յետոյ Զմշկա-ամերիկական-հայ-ընկերութիւնը, (ապրիլի 28-ին) պիտի ներկայացնէ մի-ևնոյն Բիշելիօն:

Պ. Իզմայիլովը (ռուսերէն խաղար). ներկայացնումէր նորին պայծառափայլութիւն կարդինալ Բիշելիօին: Ընդհանրապէս լաւ խաղաց, իսկ մին քանի տեղերում բոլորովին գերազանցեց պ. Ագռամովին—անցեալ տարիներում այդ դերը խաղացողին: 4-որդ գործողութեան մէջ, նա հաստատեց թէ փորձուած դերասան է. և թէ մեղք բան կը լինէր եթէ Թիֆլիզի թատրոնատէր հասարակութիւնը չը գնահատէր նորա խաղը բեմի վրայ:

Տիկին Մարքսը էդ առաջին անգամը չէր որ գեղեցիկ և կենդանի էր խաղում: Մեր կարծիքով Իւլիան, (Բիշելիօի հոգեղաւակը) ուրիշ տեսակ չէր լինի, եթէ ոչ Մարքսի ներկայացրած Իւլիան:

Երկու օրից յետոյ (ապրիլի 28-ին) էդ միևնոյն Բիշելիօն, որ Զմշկա-ամերիկական-ընկ. հայերէն ներկայացրեց, բաւականին յաջող գնաց: պ. Զըմշկեանը սկզբից մինչի վերջը ուսումնասիրել էր իր դերը: Միևնոյն 4-որդ—գործող. մէջ, որը յաջողեց ռուսերէն ներկայացման ժամանակ, պ. Իզմայիլովին, միևնոյն տեղում, պ. Զմշկեանը հիացրեց հասարակութեանը. էն մ օ ն օ լ օ գ ը որ նա կարդումէ Լուդովիկոս XIII-որդի—առաջ, երբ նա խնդրել էր ներողութիւն Կաւալէր դը-Մօպրայի համար, և նա—բայց ասել էր, երբ պաշտպանութիւն էր խնդրել իւր սպանողների դէմ, և նա—Լուդովիկօսը երեսը չուռ էր տուել: Այդ տեղ, այդ ծեր, և նեհար մարդը, այդ իշխանութիւնից ընկած մինիստրը (Բիշելիօն) բողոքելով Լուդովիկին իր էդպիսի անարդարադատութեան համար, էդ տեղում ասումենք պ. Զմշկեանի խաղով Բիշելիօն մեր աչքին աւելի բարձր և աւելի մեծ երևեցաւ, քան թէ այն ժամանակ, երբ նա իշխանութեան մէջը մթթէ արդելքները այնքան մեծ են, որ ստիպէր մեզ հեռանալ ուղիղ գծից և մի այնպիսի ահավոր չրջան անել ինչպէս Վլադիկավկասից Պետրովսկ և Բաքու: Սարերի շղթայի միջով երկաթուղի տանելու համար կայ մի գլխաւոր արդելք, այն է քանի մի բարձրութիւնների մէջ անցքերը փորելու (տոննել): Մեզանում հարկաւոր կը լիներ մի գլխաւոր տոննել փորել Կ օ ր ի ի և Գ ու դ ա ու ր ի մէջ 6 վերստ երկարութեամբ և էլի մի քանի փոքր անցքերը ժայռերի մէջ, որոնց գումարված երկարութիւնը հաւասար կը լինի 7 վերստի: Ուրեմն հեղինակի հաշվով ընդամէնը 13 վերստ հարկաւոր է սարի մէջ փորելու: Սա մի աշխատանք է, որ չէ ներկայացնում այն դժվարութիւնները, որ ունին Եւրոպացիք օրինակ իրանց Ալպեան սարերը փորելով: Կան տոննէլներ Եւրոպայում, որոնք 33 վերստ երկարութիւն ունին: Իսկ Կովկասեան սարերը կազմող քարերի տեսակները աւելի կակուղ են, քան թէ Ալպեան սարերում, նմանապէս ձիւնի գիծը աւելի բարձր է մեզանում քան թէ Եւրոպայում (չը հալվող ձիւները աւելի մեծ բարձրութիւնների վրա են գտնվում, քան Եւրոպայի սարերում): Այդ դժվարութիւնների պատճառով երկաթի ճանապարհի ծախսը կաճի մինչև $10^1/_2$ միլլիոն:

Բայց այն յարմարութիւնը կայ, որ եթէ պատահի Անդրկովկասում մի պատերազմ, այդ երկաթուղին մեծ հեշտութեամբ և արագութեամբ կը բերի զօրքին հարկաւոր պաշար և հաց:

Վերջացնումեմ ֆէլիէտոնս երկու մ օ դ ն ի պ ա տ մ ա բ ա ն ն ե ր ի առիթով:

Վերցրու Մեղուի 4-որդ համարը ընթերցող, կարդա առաջնորդող յօդուածի սկզբից, մինչի մի 23 տող: Էդ տեղ երևելի պատմաբանը ասումէ, թէ պատմական փաստ է, որ այն երկիրները որոնք բնութեան յաջող պայմանների տակը չեն, որտեղ ոչ բնական հարստութիւն կայ, և ոչ էլ պտղաբերութիւն, դոքա ամէնից հարուստ և ամէնից լուսաւորեալ ազգերն են. և այլն:

Ես էդ կարծիքի ընդեմ բան՝ չեմ ասում·բայց տես թէ ով է ասում:

Միևնոյն Մեղուի, միևնոյն 4-որդ համարի մէջ, միևնոյն խմբագրութեան անձինքներից մէկը, միևնոյն մտքի վերայ խօսելով՝ այսպէս է ասում—„պատմական իրողութիւն է, որ աւելի մտաւորական կեանքով ապրում են այն ազգերը, որոնք գտանվելով բնութեան աւելի յաջող և ձեռնտու պայմանների տակ, չուտով են կարողացել հայթայթել և ապահովել իւրեանց մնունդը և ֆիզիքական կարիքը"—

Երկուսն էլ պատմաբան դառնալու փափագ ունեն, երկուսն էլ հրաւիրումեն միամիտ ընթերցողին որ իրան հաւատան, երկուսն էլ խմբագրողներ են, բայց երկուսն էլ մէկ մէկու հակառակ բան են ասում:

Հիմի մենք ինչ ասենք ընթերցող, դրանցից որին հաւատանք: Եթէ իմ խորհուրդս կը լսես, ոչ մէկին դեռ չը հաւատանք, քանի որ մեզ էդ գաղտնիքը չեն մեկնել: Առժամ բաւականանանք հետևեալ առածով:

դրողը դուք—ջնջողը դուք
ովկասի—թէ սուտը դուք.

Զաքուճը:

պէին իրանց միամիտ եղբարցը յիշեալ բարենպատակ ընկերութեան կազմելու մասին, աչքի առաջ ունենալով իրանց խղճալի եղբարց վիճակը։

—

Այս տեղ Բագու, հայ վաճառականներից ոմանք տեսնելով հացի թանգութիւնը, որ օրէցօր աւելանում էր, աղքատասիրական զգացմունքով շարժված, բերել տուին Աստրախանից բաւական պատրաստի ալիւր և էժան գնով բաց թողին. Ալիւրը, որի փութը վաճառվում էր 1 մ. 76 կամ 1 մ. 80 կ. այժմ վաճառվում է 1 մ. 20 կոպէկ։

—

Նամակներից տեղեկանում ենք, որ թշուառացած Շամախին տխուր վիճակի մէջ է։ Մարտի 25-ին պատահել է այն տեղ ևս թեթև գետնաշարժ։ Անցեալ շաբաթներում Մոսկվայի երևելի հայ վաճառական պարոն Անանեանցը գտնուել է Շամախի, որ և 800 մանէթի չափ ողորմութիւն է բաժանել աղքատ բնակիչներին։ Բացի դրանից, երևումեն զանազան տեղերում, թէ թատրոնական խաղարկութեան միջոցաւ և թէ այլապէս գոյացած յայտնի գումարներ Շամախեցւոց համար։ Արդեօք այդ գումարները բարեխղճաբար և ըստ արժանւոյն են գործ դնվում...։ Լաւ կը լինէր, եթէ նոքա, որոնց յանձնուած է այդ գումարների բաժանարարութիւնը, չուտ չը ցրուէին, չը բաժանէին ձեռք եկածը՝ այլ համբերէին, մինչև որ ամեն յուսալի տեղերից ստանային, և մի գումար կազմէին. և այնուհետև բոլոր հասարակութեան խորհրդովը գործ դնէին ուր ինչպէս հարկն է։

Ի 28 ապրիլի 1872։ Ց. Միրզաբէգեանց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուս „Русск. Міръ“ լրագիրը խօսելով ռուս լրագրութեան և օրագրութեան վերա, կարծումէ որ թէև տպագրութեան աղատութիւնը ստանալուց յետոյ ռուս պարբերական պրէսան մեծ առաջադիմութիւն է արել, բայց դարձեալ չէ համապատասխանում ժողովրդի պահանջներին։ Լրագիրը ասումէ թէ հարկաւոր է միայն ուշադրութիւն դարձնել կարդվումեն արդեօք առաջնորդող յօդվածները թէ ոչ,—և մենք կը համոզվենք որ բացի „Москов. Вѣд.“ լրագրից ոչ մէկինը չեն կարդում. . . ։ Ցարուցանող հարցերը ժողովրդի պահանջներին մեծ մասամբ օտար են, և զբաղեցնում են ոչ թէ երկրի դրական պահանջների այլ ֆրանսիական կամ ուրիշ աղատամիտ օրագրութեան աղդեցութեան տակ։ Միակ միջոցը մեր օրագրութեան և լրագրութեան կեանք տալ, վերջացնումէ «Русск. Міръ»—այն է զարգացնել բոլոր ռուսիայում դաւառական լրագրութիւնը և նորան նշանակութիւն տալ, որ նա իր կողմից իրաւունք ունենար տեղական խնդիրներով զբաղվելով, մայրաքաղաքի լրագրութեանը հասարակական դրական նիւթերը առաջարկի։

—

„Прав. Вѣст“. լրագրում կարդումենք որ Խարկովի խառվութեան պատճառով պրիստավը իր պաշտօնից հրաժարեցրած է և դատաստանական քննութեանը կենթարկվի։

—

Գօրու վիճակից հաղորդումեն մեզ, որ շարունակ վչումէ արևելեան քամին, և որ խոտը բոլորովին չորացել է, որովհետև քանի ժամանակ է անձրևները չեն եկել։

—

Թիֆլիսում, բոլոր առաջին հարկաւորութեան նիւթերը, օրինակ միսը, շատ թանգ են այժմ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՆԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Քաղաքականութիւն և կին .. ի՞նչ յարաբերութիւն կայ մէկի և միւսի մէջ։ Ի՞նչ գեր կարօղ է խաղալ կինը քաղաքականութեան մէջ։ Ահա թէ ինչ կասեն շատերը կարդալով մի այսպիսի վերնագիր։

Այդպիսի հարցը շատ բնական և հասկանալի է, այն մարդկանց համար, որոնք իրանց կարծիքը հիմնումեն միայն նորա վերայ, ինչ որ նրանց շրջապատելէ։ Կինը գերդաստանի անդամէ։ Այն տեղ է նրա նշանակութիւնը և դերը։ Այս մի ընդունված կարծիք է, որ բաժանումեն ինչպէս տղամարդիք, այնպէս էլ և կանայք։

×

Եթէ այս կամ այն կինը կամենար դուս դալ աւելի լայն գործունէութեան ասպարիզում,—կարող էր արդեօք իրագործել այդպէս։ Կարող էր, օրինակի համար, դառնալ բժիշկ կամ փաստաբան։ Ոչ. հաղար ու մէկ պատճառներով՝ ոչ. սկսած այն բանից որ կինը մէնակ չ'պէտք է մանդայ փողոցներում, և վերջացրած նրանով՝ որ մարդը որ նրան կերակրում է, աւելի կ'ցանկանար, որ կինարմարը նորա համար լինէր մի խաղալիկ գեղեցիկ տիկին, քան թէ համարել նրան մի մարդ որի ուշադրութեանը պէտք է արժանանալ, երբ անկարելի է փողով առնել։

×

Տղամարդը ինքնասէր է։ Նա կամենումէ որ փառաւոր և կանոնաւոր կերպիւ ապրի։ Իսկ դորա համար, նրան հարկաւոր են, փափուկ նստարան, սենդարար ճաշ, պատուական գինի. յարմար խալաթ. և արձակ հոդաթափներ։ Էս բոլոր բաներով կարելի է լաւ ապրել։ Բայց նրան հարկաւոր է դեռ ևս իւր սեպհական կինը, որին կարողանայ նա կառավարել, ինչպէս իւր հոդաթափները։ Կամենամ կ'հագնեմ աջ, կամենամ ձախ ոտիս. իսկ եթէ կամենամ կ'շպռտեմ անկողնակալիս տակ. թող էնտեղ ընկած մնայ, քանի որ ինձ դուր կ'դայ։

×

Այս անդամ մենք չենք խօսի այն բանի վերայ, թէ ինչպէս պատահեցաւ որ կինը համաձայնեց ընդունել իր վերայ մի էդպիսի իրերի դերը։ Կարելի է նրան էդ դուր է գալի, իսկ կարելի է կային էնպիսի հանդամանքներ, որոնք ակամայ պարտաւորացրին նրան էդ դերը։ Բայց եթէ մենք հարցնենք մեր իւրաքանչիւր կարդացողին թէ համարումէ արդեօք իրան իր կնոջ պարոնը, իսկոյն կ'ստանանք պատասխան—այո։ Եթէ միևնոյն հարցմունքով մենք դառնայինք նոյնպէս և դէպի կանայք, միևնոյն պատասխանը կ'ստանայինք, թէ և երբեմն դա կ'ուղղվէր արտունջով։

×

Մենք ասեցինք որ այր մարդը ինքնասէր է։ Բայց մեր բաղդից էդ ինքնասիրութիւնը սեպհականութիւն է ամէն մարդու, (մենք համարձակվումենք կանանց էլ մարդ համարել) հետևաբար և կանանց։

Էն երկիրներում որտեղ կրթութեան լոյսը կանանց էլ շոշափեց, որտեղ նա մի քայլ բարձրացաւ իւր զարգացման մէջ, էնտեղ կինը սկսեց ուրիշ տեսակ խօսել. քան թէ մեր կինը, որ իւր լացի և հառաչանքների մէջն է արտայայտում իւր ճնշուած զգացմունքը մարդկային արժանաւորութեան, էն էլ հազիւ։

×

Կինը ինքը շատ լաւ հասկացաւ, որ իւր սարկութեան և խոնարհութեան պատճառը նորանումն է, որ ինքը իրան չէ կերակրում, այլ թէ մարդը միշտ կարող է ասել հնազանդիր, եթէ ոչ. քաղցած կ'մեռնես։

Կինը այդ հասկացաւ, և մի անդամ հասկանալուց յետոյ նորան դժուար չէր վճռողական քայլը անելու։ Ես կաշխատեմ ասեց կինը ինքն իրան, ես կապրեմ անկախ աշխատանքովս։ Եւ խմբովին դիմեցին կանայք ինքնակայ աշխատանքի այն ձևին, որը աւելի յարմար էր գտնվում։ Նոքա դարձան ուսուցիչներ, ժանկարարներ, դաստիարակիչներ, թարգմանիչներ, գրաշարներ, կազմարարներ, հեռագրողներ, բժիշկներ...և այլն։

×

Այդ տեսակ կանանց թիւը մեծ է։ Բայց նոցանից ամեն մէկին առանձնապէս անկախութեանը հասնելու համար, որքան արգելքներ և դժուարութիւններ հարկաւոր էր յաղթել թէ հասարակութեան թէ ընտանիքի մէջ։ Ամեն քայլ անելիս նա արգելքին էր պատահում։ Բաւական չէ որ ընտանիքը և հասարակութիւնը հերքումեն նորա իրաւունքները, բայց և օրէնքը չէ ճանաչում նորան մարդին հաւասար լինելու իրաւունքը։

×

Եւրոպայում և Ամերիկայում կանայք նորանով չեն բաւականանում, որ նոցանից մի քանիներին, որպէս բացառութիւններին, աջողվում է աղատվել իշխանութենից։ Նոքա կամենումեն որ առհասարակ կանայք,—և ուրեմն իւրաքանչիւր կին առանձնապէս,—հաւասարվեն իրանց իրաւունքների կողմից աղամարդիկների հետ։ Կինը կամենումէ փոխել օրէնքը, այն օրէնքը որ նորա ձեռք ու ոտքը շղթաներով է կապում և նորան մարդի ստրուկ է անում։ Նա կամենումէ որ հրատարակվի նոր օրէնսդրութիւնը, որը կ'հաւասարեցնէ նորան մարդի հետ։

×

Բայց օրէնքը ինքն իրան չէ փոփոխվում,—նորան փոխումեն մարդիկ, որոնք իրաւունք ունեն այդ անելու։ Այդպիսի մարդիկ բոլոր եւրոպական պետութիւնների մէջ ընտրվում են ժողովրդից, և կառավարութեան մէջ կաղմումեն պատգամաւորների ժողով կամ պարլամենտ։ Ժողովրդի ներկայացուցիչներին, այսինքն նոցա որոնք պարլամենտի անդամներ դառնալով օրէնքները կ'դրեն,—իրաւունք ունի ընտրելու իւրաքանչիւր քաղաքացի, բացի երեխաներից, դատաստանական քննութեան տակ գտնվողներից, խելագարվածներից և...հանանցից։

×

Մթէ աղամարդիկ կ'ուղարկեն պարլամենտը այնպիսի մարդիկներին, որոնք կ'կամենային յօգուտ կանանց, երկրի օրէնքը փոխելու և իրանց եղբայրներին այդպիսի զուարճալի խաղալիքից զրկելու։ Ոչ, մարդը երբէք չէ զրկի իրան մի իրաւունքից։ Ճորտաստերերը երբէք իրանք չեն ազատում իրանց սարուկներին, մինչև որ տէրութիւնը չի ստիպի նոցա այդ անելու, կամ իրանք ապստամբված ճորտերը։

×

Կանայքը, մանաւանդ Անգլիայում և Ամերիկայում, լաւ են հասկանում այդ ճշմարտութիւնը, և այժմ նոքա աշխատումեն քաղաքական ընտրութիւնների մէջ մասնակցութեան իրաւունքը ստանալու։ Կային օրինակներ, որ կանանց թոյլ տվվեցաւ մի քանի երկիրներում ընտրութիւնների մէջ մասնակցելու,—բայց սոքա բացառութիւններն էին, իսկ կանայք պահանջումեն ընդհանուր, պարտադիր օրէնքը։

×

Երբ մի մեծ լճի մէջ դուք մի քար կը գցէք, քարը ջրի մէջ ընկնելով և ջրին դիպչելով կ'կազմի մի փոքրիկ շրջանակ։ Այնտեղից ուր քարը ընկաւ շրջանները ալիքների նման սկսումեն ընդարձակվել ջրի բոլոր մակերևոյթի վերա։ Առաջ շրջանի ալիքները գնումեն առաջ և շատ նկատելի կերպով, բայց քանի հեռանումեն այն տեղից, ուր քարը ընկաւ, այնքան դանդաղ և թոյլ կը լինին ալիքանման շրջանները։

×

Արդկութեան մէջ ընկաւ մի միտք, այն է կանանց ազատութեան միտքը։ Նա ընկաւ Անգլիայում և Ամերիկայում։ Այդ երկիրներից նորա շարժումը շարունակվումէ և անցնումէ երկրից երկիր։ Բայց մենք շատ հեռու ենք գտնվում այդ երկիրներից, ոչ թէ այնքան տարածութեամբ, որքան լուսաւորութեան տարբերութեամբ, և ո՞վ գիտէ երբ կ'հասնին մեզ այդ շարժման թոյլ շրջանակները...

×

Այդ է պատճառը, սիրելի ընթերցող, որ մեզ համար, ուր կինը դեռ ևս ոտքի վերա հաղնելու մի մաշեկ է, որ ոտից անդամ չէ ընկնում, երբ մենք նորան կ'հագնենք,—այդ է պատճառը ասումեմ, որ մեզ համար զարմանալի և անհասկանալի է յետագայ երկու բառերը միմեանց մօտ դրօշմված տեսնելու. քաղաքականութիւն և կին։

ՆԱՄԱԿ ԹԷՀՐԱՆԻՑ։

Ես դրումեմ ձեզ դարձեալ Պարսկաստանի սովի առիթով։ Ես արդարև, մենք չենք կարող մեր ուշադրութիւնը չը դարձնել մի այդպիսի սարսափելի երեոյթի վրա, որոյ պատճառաւ ամէն օր հազարաւոր մարդիք զրկվումեն կեանքից։

Այս օրերում Համադանից ստացուեցաւ մի զարհուրելի լուր, երկու կանայք, և եօթն մարդիք, ընկերացել են այն պայմանով, որ դողանումէին քաղաքի մանր երեխայք, և մորթում ուտումէին նորանց։ Թաղեցիք նկատումեն օր ըստ օրէ պակասումէ երեխաների թիւը։ Երկար որոնելուց յետոյ, չարագործները բռնվումեն, որոց տանում յայտնվումէ բազմաթիւ զոհերի ոսկորտիքը։ Նորին վերափառութիւնը Սադէրազամը, (Շահի առաջին նախարարը), որին հեռագրուած էր այդ անցքը, հրամայումէ երկու կնիկներին խեղդել կախաղանի վրա, իսկ մնացեալ եօթն չարագործներին ձգել բանդ, առանց ոչինչ տալու ուտելու և խմելու։

Քանի օրից յետոյ բանդի դրները բաց անելով գտանումեն, որ եօթն չարագործներից հինգը իրանց երկու ընկերներին մորթել կերել էին, և այնուհետև ինքեանք նոյնպէս ապրելու մտունդ չունենալով. սովամահ էին եղած։

Այժմ ես կը տամ ձեզ մի քանի տեղեկութիւններ Թէհրանի մասին, այս տեղից դուք կարող էք երևակայել բոլոր Պարսկաստանի այժմեան թշուառ վիճակը։

Թէհրանում, — իբրև տէրութեան արքայանիստ քաղաքը, ուր Բարձրագոյն Կառավարութիւնը առաւելապէս է գործ դնում իւր նպաստները կարօտեալներին, — սովից մեռանողների թիւը ամէն օր հասնումէ մինչև վեց հարիւր հոգու։

Սովի օր ըստ օրէ սաստկանալու պատճառն է, որպէս յառաջագոյն յայտնած եմ ձեզ, ճանապարհների անպարմարութիւնը։ Ամէն մի մթերք, ամէն մի ուտելիք պիտի տեղափոխվին դրաստների կրունակի վրա։ Բայց սովի պատճառաւ դրաստների մեծ մասը մորթուած և կերուած լինելով. նոցա թիւը այնքան փոքր է, որ հազիւ են գտանվում չարվաղտներ ուտելիքներ տեղափոխելու, այդ պատճառաւ բեռնակրութեան վարձը չափազանց բարձրանալով, առաւելապէս թանդացնումէ հացի գինը. մինչ ժողովրդի աղքատ դասի համար նա լինումէ բոլորովին անմատչելի։

Օրինակի համար, ամենայարմար միջոցը, որով Պարսկաստանը այժմ ստանումէ հաց, է Կասպից ծովը, այս ճանապարհով Պարսկաստանը կարողանումէ առատ ցորեան կամ ալիւր ստանալ Ռուսաստանից։ Բայց ստացած մթերքը, դուրս բերելով Աղենդարանի Բալֆրուշ քաղաքը, և այն տեղից մինչև Թէհրան հասնելը, ամէն մի բեռ ալիւրը (18 փութ) 22 թուման (66 բուբլ) ճանապարհի ծախս է վեր առնում։ Դուրս գալով Թէհրան մի բեռ ալիւրը, կամ 18 փութը, արժումէ 45 թուման (135 բուբլ)։ Երևակայեցէք, աղքատ ժողովուրդը ինչով կարող էր դնել այդքան թանդ կեանքի պաշարը, երբ նա իւր բաղդաւոր օրերում, երբ ալիւրի փութը ծախվումէր 30 կոպէկով, դարձեալ սովալուսած էր շատ զիշերներ սոված փորով քնել...։

Այս տեղից դուք կարող էք երևակայել այն քաղաքների դրութիւնը, որոնք աւելի հեռու են Կասպից ծովից, քան թէ Թէհրանը։

Սովի սարսափելի կոտորածը, որ հանարեա կէս կիսցց Պարսկաստանի ժողովուրդը, արդեօք կաղդէ Բարձրագոյն Կառավարութեանը, երկաթուղիների անհրաժեշտ կարևորութիւնը։

Արդեօք նա կը զգայ իւր սխալը, որ քանի անգամ մերժեց Եւրոպացի ընկերութիւնների առաջարկութիւնը Պարսկաստանում երկաթուղի չինելու մասին, մի վէքիլի խօսքով, թէ երկաթուղիները ինչասակար կարող էին լինել Պարսկաստանին պատերազմի ժամանակ, թէ նոքա կը հեշտացնէին յաղթող աղդերին մի քանի օրում նստել Պարսկաստանի սրտում, Թէհրանում։ Զը մոռանալով, որ երկաթուղիները պատերազմի միջոցներում, (եթէ նոքա կարող էին օգուտ բերել թշնամուն), այնքան դիւրին քանդուելու բաներ են, որքան դիւրին էր մեզ մերկանալ մեր վերարկուց։

Մեք, իբրև Պարսկաստանի այժմեան դժբաղդութիւններին կարեկից, խորհուրդ կը տայինք Բարձրագոյն Կառավարութեանը օգուտ քաղել մի այդպիսի սարսափելի դասից, թէ ամէն մի տէրութեան մէջ, ուր չը կային երկաթուղիներ, նաւադնացութիւն, ժողովուրդի ապրուստի հնարները չեն կարող ունենալ ընդհանուր հաւասարակշռութիւն,

—մի տեղ կը լինէր հացի էժանութիւն, մի այլ տեղ ժողովուրդը կը մեռանէր սովից։—Այդ դրութեան մէջ է այժմ Պարսկաստանը։

ՆԱՄԱԿ ԲԷՐԼԻՆԻՑ։

Այսօրուա (27 (15) ապրիլի) Perliner Fremdenblatt մի կարճ քաղուած է բերում աշխարհագրական ընկերութեան 6-ին ապրիլի եղած նստի մասին։ Ահա այն մասը որ հայ կարդացողին մանաւանդ հետաքրքիր կը լինի։

Պ. Կիպէրտ (Kierert) ցոյց տուեց նոր աշխարհացոյցներ, որոնցից մինը ամերիկական է և ներկայացնում է հեռագրական գծերը որոնք կան բոլոր երկրագնդի վերայ, միւսները երկու մեծ ռուսական աշխարհացոյցներ են՝ մինը 10 թերթից բաղկացած Ռուսաց թագաւորութեան աշխարհացոյց, միւսը 22 թերթանի Ասիայի հնդկային գաւառի աշխարհացոյց։ Վերջապէս ցոյց տուեց և իրանից աշխատած աշխարհացոյցը Արևմտեան Ասիայի, որի նպատակն է մատակարարել հին և նոր կտակարանական պատմութեան ուսումին։

Սորանից յետոյ պ. Կիպէրտ խօսեց այն ձեռնարկութեան վերայ, որ գոգրած է Կ. Պոլսի հայ չրջանների մէջ և որի նպատակն է հետազօտել Հայաստանի հնութիւնները և տեղագրութիւնը (Topogeraphie)։

Այս երկրի մէջ գտնվող բազմաթիւ յիշատակները ասորի սեպաձև գրութիւններով, որոնցից արդէն 40 յայտնի են, լուսանկարելու և բացատրելու են։ Հայերը այս մասին մեծ յուսով են պ. Մորդըմանի (Mordmann) օգնութեան վերայ։ Տեղագրական աշխատանքի վերաբերութեամբ Հայերը դիմեցին Մոլտկէ-Կոմսին, օգնութիւն խնդրելով Պրուսիայի գներալ-չտաբի ծառայողներից և հաւանական է որ այս օգնութիւնը կը տրվի Հայերին։

Անդրէաս Արծրունի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիայում չարժումը կանանց ընտրողութեան իրաւունքը տալու աւելի ու աւելի նշանակութիւն է ստանում։ Կուսակիցները այդ վերանորոգութեան կազմեցին մի ժողով որը հաստատեց յետագայ վճիռը՝ թոյլ չը տալ կանանց մասնակցել ընտրողական իրաւունքների մէջ, հակառակ է Անգլիայի ընտրողական սկիզբների, արդար չէ, որովհետև զրկում է այն անձերին իրանց իրաւունքից, և վնասակար է հասարակութեանը։

— „Indep. Belge“ լրագիրը ասում է թէ պ. Ցակօբ Բրայտի առաջարկութիւնը Անգլիայի պարլամէնտում մերժվեցաւ, կամ աւելի լաւ ասենք յետ ձգվեցաւ 6 ամսով 222 ձայների բազմութեամբ 150 դէմ։ Առաջարկութիւնը յետագայ էր „կանանց որոնք անկախ դրութիւն ունեն, չափահաս աղջկերանց և այրի կանանց, որոնք հարկեր են վճառում և որոնց դրութիւնը համապատասխանում է ուրիշ պահանջած պայմաններին,—պարլամէնտի պատգամաւորները ընտրելու և քաղաքի ու համայնքի ընտրութիւնների մէջ մասնակցելու իրաւունք տալ։ Լրագիրը կարծում է, որ չը պէտք է ուսահատվել խնդրի աջողվելու մասին ապագայում։

— Դոն-Կարլոսին չէ աջողվում իր փորձը իրականութիւն դցել Իսպանիայի մէջ և իր ձեռքը դցել այդ երկրի իշխանութիւնը։ Վերջին հեռագրերը հաղորդումեն, որ կարլիստները և ինքն Դոն-Կարլոս յաղթվումեն Մարշալ Սէրանս զօրքերով։ Կարլիստների մեծ մասը ցրված են, մի քանի խմբերը դեռ ևս մնումեն և պաշտպանվումեն. չատերը փախան Ֆրանսիայի հողի վերա, առաջնորդներից չատերը դերի ընկան Սէրանս Մարշալի ձեռքը։

— Կ. Պոլսից հեռագիրը հաղորդումէ, որ Թիւրքիայի զօրքի թիւը հասնումէ այժմ մինչև 800,000 մարդ։ Տարեկան հաշիւը որ Սուլթանին ներկայացվեցաւ ցոյց է տալիս Թիւրքիայի այժմեան դրութիւնը որպէս ամենաբարեկարգ։ Սուլթանը պատասխանեց, որ այժմեան ժամանակը պահանջումէ աւելի արագ գործողութեան եղանակը քան թէ առաջ։

— Անգլիական „Times“ լրագիրը ասումէ թէ Դոն-Կարլոսը Իսպանիայի սահմանները անցնելուց յետոյ Նավարի գաւառում յաղթված է եղել և կարծումեն որ թագաւորական զօրքի ձեռքը դերի է ընկել մինչև անգամ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարսկաստանի մի ճանապարհորդութիւնից քաղումենք հետեւեալը.

„Մենք վեր եկանք չ ա փ ա ռ խ ա ն ա ւ մ (իշխան) և մեզ հրաւիրեցին թ ա վ լ է ն (ախոր) ասելով թէ չատ տաք է, և անասուններ, ձիեր արել են մէջը, տաքութենից բուզ է տալիս։ Մենք պարտաւորուեցանք համաձայնել ցրտի պատճառով։ Ես խնդրեցի մի աման ջուր, իշխանի տերը պատասխանեց, թէ աման չունենք, որ մուրտառեցնես. ես դարձեալ խնդրեցի, ասելով, որ հիւանդ եմ, մ ա զ ե ր ս ց ա ւ ում է։ Նա ինձ ասաց, ձմերուկ կամ խաղող առ ու կեր։ Վերջապէս ես ստիպուեցայ գնալ Արաքսի մօտ և բերնիս վերայ ընկած խմել։ Այդ տեղ յանկարծ մի մօլլա պատահելով ինձ, գոռաց „մուռտառ-օղլի մուռտար Արազի դա մուռտար էլդն (ապականեալի որդի ապականեալ, Արաքսն էլ ես ապականում)։

* *
*

„Մասիս“ լրագիրը յետագայ անցքն է պատմում։ „Ուրբաթ առաւօտ Օրթագիւղ ինքգինք ոպանող հայ երիտասարդին համար կիսմանանք թէ աղջկան մի սիրահարեալ էր երեք չորս տարի է ի վեր և կուզէր ամուսնանալ. բայց հայրը չէր հաճեր. որովհետև տղան արհեստ մի կամ իր ապրուստն հայթայթելու միջոց մի չունէր. Ուստի երիտասարդն ալ յուսահատելով, անձնասպանութեան դիմած է։

* *
*

Ֆրանսիական „Annuaire de Paris“ պարբերական հրատարակութիւնը հաղորդումէ որ վերջին վիճակագրական տեղեկութիւններից երեւումէ, որ Փարիզում կան 4940 մարդ, որոնք ոչ մի կը բ օ ն ի ն կամ դ ա ւ ա ն ո ւ թ ե ա ն ը չեն պատկանում։

* *
*

Մոսկվայից մեզ գրումեն, որ մի քանի ուսեալ, բարձր ուսում ստացած, գ ի տ ն ա կ ա ն անձինք, խօսելով „Մշակի“ վերա, կարծիք են յայտնում, թէ այժմեան ժամանակ մի հայոց լրագիր կամ օրագիր հրատարակելը յ ի մ ա ր ո ւ թ ի ւ ն է, թէ այդ տեսակ պարապմունքը ծ ի ծ ա ղ ի ա ր ժ ա ն ի բան է, թէ այդպիսի գործունէութիւն ունողը խըղճալու արժանի խ ե ն դ է. . . կ ջ ղ ջ ղ ե ն բարձր ուսում ստացածները. . .։

* *
*

Ֆրանսիայում փորձ են անում երկաթուղու չոգեկառքը տաքացնելու համար փայտի կամ քարածուխի տեղը որպէս վառելիք ն ա ֆ թ գործածելու։

* *
*

„Кавказъ“ լրագրում կարդումենք թէ Կաղանի մէջ նորերումս քննվումէր մի գործ մի զինուորական աստիճանաւորի մասին որին բ օ զ գ ո վ ծեծել էին։ Պաշտպաններից մէկը, պ. Բելովը իր ասած ճառի մէջ պատմեց թէ ինչպէս նորան էլ ծեծումէին դիմնազիոնի մէջ և աւելացրեց. „ինչ որ վերաբերումէ մարմնի այն մասին, որը ենթարկվեցաւ հարուածներին նա լաւ պաշտպանված լինելով չունի առանձին զգացողութիւն, և կարելի է աշխարհի ստեղծման օրից ճանաչված է որպէս ամենաանվնասնց տեղը այդ տեսակ փորձերի համար։ Գոնէ մեր հայրենիքում նա քանի մի դար շարունակ պատուով ընդիմացել է կ ն ո ւ տ ի ն մ ա բ ա կ ի ն, բ ո զ գ ի ն և այդ տեսակ գործիքների այլ ձևերին. . .։

* *
*

„Մեղու Հայաստանի“ մէջ հրատարակված յ ա ւ ե լ վ ա ծ ի պատճառով ստանումենք դաւառից յետագայ հետաքրքիր նամակը.

„Մնծարգի խմբագիր „Մշակ“ լրագրի

„Միտս է իմ մանկութեան օրերում ողորմած հոգի մեծ հայրս ստէպ ստէպ կը կրկնէր ինձ այս խրատը.—զգուշացիր որդեակ այն ապերախտ մարդէն, որին դու բարերարութիւն ես անում, և որը հակառակ քո արած բարերարութեան քեզ դէմ անիրաւութիւն կը գործէ, ու կը խայտառակէ քեզ ամենի բանում, հեռացիր նրանից սիրելիս, մի ցանկանար երբէք որ նրա երեսը կրկին անգամ տեսնես. . .

„Խօսքը կանդնել է „Մեղու Հայաստանի“ լրագրի վրէն, որ, ինչպէս կը վկայեն բոլորը, մինչև այս 1872 թիւը չունէր ոչ այս նորանոր, օ գ տ ա ւ է տ տեղեկութիւնները, որոնց արժանանալու բաղդը ունեցանք նորա էջերում „Մշակ“ լրագրի հրատարակվելէն յետոյ, բայց սմանէ տեսնումենք որ նա իւր կ ա ն ո ն ը ու ձ ե ւ ը „Մշակէն“ է վերառել, ու պարզ նկատումենք որ նա՝ իւր տպագրութեան նիւթերի ն չ ա ն ա ւ ո ր մասը „Մշակէն է քաղում—ուրեմն էլ ընչ՞ու պիտի սկսէ ապերախտութիւնը ի գործ դնել „Մշակի“ դէմ, որից ամեն բան ստանում, և որի համար մեր համազգի բոլոր հասարակութիւնը ցանկանումէ յաջողութիւն իր բարենպատակ սկսուածքում. . .։ Ընչ՞ու. . . ողորմած հոգի մեծ հայրս ճշմարիտ էր ասում. . .

Ձեզ յարգող Ա. Գնունի։

ԹԻՖԼԻԶԻ ՓՕՍՏԸ։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ։ Ռուսաստան, Արտասահման, Քութայիս, Դարբանդ և Երևանի գաւառը։

ԵՐԵՔՇԱԲԹԻ։ Բաղու, Գանջա. Շուշի, Շամախի։

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ։ Քութայիս, Ռուսաստան, Արտասահման, Երևան, Ախալցխա Դարբանդ։

ՀԻՆԳՇԱԲԹԻ։ Ռուսաստան, Արտասահման։

ՈՒՐԲԱԹ։ Քութայիս, Երևան, Ախալցխա Զակաթալ, Նուխի։

ՇԱԲԱԹ Բաղու, Ռուսաստան, Արտասահման, Դարբանդ, Գանջա։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(մայիսի 18-ին)։

ՈՍԿԻՆ, (պոլուիմպերիալ) . . .	6	ռ.	8	կ.
ՓՈՒԱՆԱԿԱԳԻՐ (բարաթ) Պոլ. վճարելիք (լիրա Օսմանեան) .	6	„	85	„
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.	5	„	40	„
„ Ամերիկայի սերմից .	7	„	20	„
ԹԱՄԲԱՔՈՒ Տրապիզոնի անքօք	11	„	50	„
ՇԱՔԱՐԸ Ռսի (Բրօցկու)	9	„	50	„
„ „ միւս տեսակը . .	9	„	30	„
„ զաղրանիցու տրանցիդ.	5	„	75	„
մաքսը վճարած	8	„	80	„
ՇԱՔԱՐԱՒԱԶԸ Ռսի.	8	„	40	„
ԱԼԻՒԻՐԸ կրուպչատկայ Ռուսաստանի բերքը փութը. . . .	3	„	60	„
ԱԼԻՒԻՐԸ կրուպչատկայ Ախվերդեանի տեղական ջաղացից (Գեանջայում) . . . . . № 1 փութ	3	„	20	„
„ № 2 „	2	„	40	„
„ № 3 „	2	„	10	„
ԱԼԻՒԻՐԸ Գեանջու հասարակ . .	1	„	60	„
„ Շորագեալու	1	„	70	„
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը.	13	„	50	„
„ Մարտինիկոյի, ցածրը .	12	„	—	—
„ Մօկո, չատ լաւը . . .	14	„	50	„
ՊՂՊԵՂԸ.	11	„	50	„
ՐԿԱԹ.	2	„	20	„
մինչև	3	„	50	„
ՄՕՄ	12	„	—	—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ։

(մայիսի 13-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի ածէ $32^{3}/_{16}$ պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի ածէ $347^{1}/_{4}$ սանտիմ. (փոխանակ 400 սանտիմ)։

ԲԱՄԲԱԿԸ Նիւ-Օրլէանի ածէ ֆունտը $11^{7}/_{16}$ պէնս։

Ռոտլանդի „ „ $24^{1}/_{4}$ է։

ԼԻՎԷՐՊՈՒԼ. բամբակի վաճառականոցը հաստատ է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. Միանսարեանցի տպագրութեանց գները այսուհետև 40% մինչև 60% զիջուցած են, ժողովրդեան համար առաւել դիւրամատոյց լինելու և ամէն մի առանձին ցանկացողի դիւրութեան համար, տպագրողը այսուհետև պատրաստ է ուղարկել ցանկացողներին ամէն մի տպագրութիւնից ոչքան օրինակ որ կամենան կամ մի հատ այն ամենայն անձանց, **որոնք ուղղակի Պետերբուրգ տպագրողին կը դիմեն,** կանխիկ ուղարկելով նշանակած դրամը, այդպիսի հասցէով. Въ С. Петербургъ, Михаилу Месроповичу Міансарову, на Михайловской площади, домъ № 2/3 Жербина; кв. № 5.

1) **Քնար Հայկական:** Պետերբուրգ, 1868. 8-ծալ։ Հայկական Քնարի առանձին **այբբենական ցանկը** տպած 1870 թ. բացի Քնարի հետ տպած սիստեմատիկական (կարգաւորեալ) ցանկից։ 8-ծալ.—ամէնը 744 էջ, մանր տիպ **մի օրինակ** փոստայի ծախսով միասին Ռուսաստանի և Կովկասեան քաղաքները 1 ռուբլի 30 կոպէկ։

Հինգ օրինակ, նոյն փոստայի ծախսով 5 ռուբլի։

Տասը օրինակ 10 ռուբլի։

2) **Խնամատարութիւն երեխայոց մարմնական և բարոյական.** շարադր. Կոմբի, անգլիացւոց թագուհու բժշկի, հանդերձ զանազան հաւելուածներով տպագրողի կողմից։ Պետերբուրգ. 1868 թուին ութծալ, էջ 300, **մի օրինակի** գինը փոստայի ծախսով 80 կոպէկ։

Հինգ օրինակի գինը 3 ռ. 50 կոպէկ։

3) **Ազգային կրթութիւն** Էդուարդ Լարուլէի. ա) ինքնակրթութիւն. բ) ազգային կրթութիւն. գ) ժողովրդական դրատուները.—Պետերբուրգ. 1867 թ. 8-ծալ էջ. հանդերձ 108, յաւելուածով տպագրողի կողմից **մի օրինակ** փոստայի ծախսով 40 կոպէկ։

Հինգ օրինակ 1 ռ. 50 կոպէկ։

Վերոյիշեալ գնով մի և նոյն գրեանքը կարելի է գնել Թիֆլիզում (առանց միւս քաղաքները Թիֆլիզից ուղարկելով) տպագրողի սեպհական տանը Հայոց Վանքի Մեծ և փոքր փողոցների անկիւնում և Թիֆլիզու գրավաճառների մօտ։

Մամուլի տակն են

և մինչև յունիս պատրաստ կը լինին Պետերբուրգում, իսկ յուլիսին Թիֆլիզում նոր աշխատասիրութիւնները Մ. Միանսարեանցի.

ա) Կանոնաւոր վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, հանդերձ զանազան յաւելուածներով, ստուերագրերով (պատկերներով) գրագրական դրասեղաններին վերաբերեալ. նոյա նրատարաններին, մարդկային կազմվածքին (20 հատ անատոմիական պատկերները) և այլն (Պետերբուրգ. 1872 թ.)։

բ) Հայերէն կանոնաւոր և վայելուչ գրութեան գաղափարները միմիայն մեր սովորական գրութեան վերաբերեալ ասոիճանաբար կարգաւորեալ վարժութիւններ, 20 օրինակից բաղկացած (Պետերբուրգ և Լէյպցիգ. 1872 թ.)։

գ) Նոյն, հինգ առանձին վարժութիւնների բաժանած, 42 երեսից բաղկացած, գունակ թանաքով տպած, որ նորա վերա ուսանողները սկզբնական պարապմունքի ժամանակ սև թանաքով գրելով գիրաբ ընտելանան կանոնաւոր գրելուն և գրիչը կանոնաւոր վարելուն (Պետերբ. և Լէյպցիգ. 1872 թուին)։

АДВОКАТЪ

АЛЕКСАНДРЪ ЯКИМОВИЧЪ ШАХЪ-АЗИЗОВЪ-КАМСАРАКАНЪ принимаетъ на себя ежедневно публичную защиту по дѣламъ гражданскимъ и уголовнымъ; составляетъ апелляціи, кассаціи и даетъ совѣты по судебнымъ дѣламъ.

Иногородные, желающіе поручить ему дѣла, присылаютъ выписку изъ документовъ. О принятіи или не принятіи они будутъ извѣщаемы съ первою почтою, или по телеграфу, на ихъ счетъ.

За веденіе гражданскихъ дѣлъ беретъ вознагражденіе на основаніи Высочайше утвержденной таксы, а за защиту по дѣламъ уголовнымъ—по особымъ соглашеніямъ съ клиентами.

Условное вознагражденіе за труды по веденію дѣлъ вѣрители уплачиваютъ ему по выигрышѣ дѣла.

Въ случаѣ проигрыша принятаго имъ дѣла онъ принимаетъ на себя платежъ вѣрителю своему судебныхъ издержекъ.

Контора помѣщается возлѣ Армянскаго Ванкскаго Собора, рядомъ съ Телеграфною Станціею, по Малой Вдовозной улицѣ, въ собст. домѣ.

ԴՈՒՐՍ ԵԿԱՒ

Մեծ. պ. Վասիլ Խօջայեանցի „Ճանապարհորդութիւն Վէզուվ հրաբուղխ սարի վերա“ Սա մի հետաքրքիր ճանապարհորդութիւն է Իտալիայի մէջ:—Ծախվում է յոգուս Ս. Մարիամեան ծխական ուսումնարանի: Ցանկացողները թող դիմեն „Մշակի“ խմբագրութեանը:

Дозволено Цензурою. Тифлисъ, 18 Мая, 1872 г. Տէրտէրեանի և ընկ. (նախկին Դուբէլիրի տպարան) Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի։